

ՀՀ տրանսպորտի նախարարության Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ
պետական հիմնարկ
Տեղեկանք

2009թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների մասին

2009 թվականին «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի կողմից Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել են հետևյալ վարկային և դրամաշնորհային ծրագրերը՝

- Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագիր
- Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր:
- Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի նախապարտաբար ստանալիս դրամաշնորհային ծրագիր
- Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի նախապարտաբար ստանալիս դրամաշնորհային ծրագիր

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի վերաբերյալ

Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի առաջին փուլի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության (Համաշխարհային բանկի) միջև 2009թ. փետրվարի 26-ին ստորագրված թիվ 4549-ԱՄ վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 25 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագրի առաջին փուլը ֆինանսավորվում է Միջազգային զարգացման ընկերակցության ֆինանսական ճգնաժամի արագ արձագանքման հիմնադրամի միջոցներից և դրա նպատակն է՝ վերականգնել կենսական նշանակության ավտոճանապարհային ցանցի (տեղական ճանապարհների) մոտ 100 կմ ընդհանուր երկարությամբ ընտրված հատվածները և ստեղծել ժամանակավոր աշխատատեղեր ճանապարհային շինարարության ոլորտում: Այդ ճանապարհները գտնվում են յոթ մարզերում՝ ապահովելով ճանապարհային կապ 39 համայնքների 71 հազար բնակչությանը: Ի լրումն վարկի գումարի ՀՀ կառավարությունը տրամադրել է 5.4 մլն ԱՄՆ դոլար գումարով համաֆինանսավորում: Ծրագրի առաջին փուլով նախատեսված աշխատանքները մեկնարկել են 2009թ. մայիսին: Շինարարական աշխատանքների մրցույթների արդյունքում տնտեսված գումարների հաշվին հուլիս ամսվա ընթացքում մեկնարկել են լրացուցիչ մոտ 18.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վերանորոգման աշխատանքները: Ծրագրի երկրորդ փուլի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի) միջև 2009թ. սեպտեմբերի 4-ին ստորագրված թիվ 7751-ԱՄ վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 36.6 մլն ԱՄՆ միլիոն ԱՄՆ դոլարի լրացուցիչ ֆինանսավորում՝ վերականգնելու կենսական նշանակության

ավտոճանապարհների լրացուցիչ 140 կմ ընտրված հատվածներ: Այդ ճանապարհները գտնվում են յոթ մարզերում՝ ապահովելով ճանապարհային կապ 52 համայնքների 176 հազար բնակչությանը: Ի լրումն վարկի գումարի ՀՀ կառավարությունը տրամադրել է 9.1 մլն ԱՄՆ դոլար գումարով համաֆինանսավորում: Ծրագրի երկրորդ փուլի 2009թ. համար նախատեսված մոտ 36 կմ ճանապարհների վերականգնման աշխատանքները մեկնարկել են 2009թ. սեպտեմբերին: Բոլոր հատվածներում վերանորոգման աշխատանքներն ավարտված են (ցանկը կցվում է):

Աշխատանքների որակի հսկողությունն ապահովել են անկախ տեխնիկական հսկիչը՝ SAFEGE (Բելգիա) և IRD Engineering (Իտալիա) խորհրդատվական կազմակերպություններից կազմված համատեղ ձեռնարկությունը և անկախ տեխնիկական աուդիտորը: Իրականացվել են նաև «Կենսական նշանակության ճանապարհների ընտրված հատվածների վերականգնման համար նոր նաժազդերի և բնապահպանական կառավարման պլանների նախապատրաստում», «Հեղինակային հսկողություն», «Կենսական նշանակության ճանապարհների ընտրված հատվածների վերականգնման համար նոր նաժազդերի և բնապահպանական կառավարման պլանների նախապատրաստում և գոյություն ունեցող նախագծերի և բնապահպանական կառավարման պլանների արդիականացում», «Կենսական նշանակության ճանապարհների տեխնիկական աուդիտ» խորհրդատուական ծառայությունները:

2009թ. ընթացքում Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի շրջանակներում իրականացված շինարարական աշխատանքների գումարը կազմել է 10,842,311.1 հազար դրամ, լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում՝ 5,612,994.3 հազար դրամ, ձեռք բերված խորհրդատվական ծառայությունների գումարը ծրագրի առաջին փուլի համար կազմել է 534,892.5 հազար դրամ, լրացուցիչ ֆինանսավորման փուլի համար՝ 187,716.9 հազար դրամ:

Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի նախապարտաբանական դրամաշնորհի շրջանակներում

2009 թվականին իրականացվել է «Չորս կամուրջների վերանորոգման նախագծում և մրցութային փաստաթղթերի պատրաստում Հայկական երկաթուղու կոնցեսիայի իրականացման համար» խորհրդատվական ծառայություններ 68,527.2 հազար դրամ գումարով:

2009 թվականին իրականացվել է «Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի» և «Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի» նախապատրաստման դրամաշնորհների ֆինանսական աուդիտ:

ՀԲ-ի Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի շրջանակներում 2009թ. կատարվող աշխատանքներ

	<i>Ճանապարհի անվանումը</i>	<i>Երկարություն կմ</i>	<i>Մարզ</i>
1	Ս2-Աղավնաձոր կմ 0+000-կմ 3+200	3.20	Վայոց Ձոր
2	Ս2-Աղավնաձոր կմ 3+200- կմ6 +000	2.80	
3	Սերս-Չարիթափ կմ0+000-կմ 3+681	3.68	
4	Սերս-Չարիթափ կմ 3+681-կմ7+788	4.11	
5	Սերս-Չարիթափ կմ7+788-կմ11+385	3.60	
Ընդամենը՝ Վայոց Ձոր		17.39	
6	Ս6-Գսեղ-Չկալով կմ0+000-կմ2+440	2.44	Լոռու
7	Փոքր Այրում-Ճոճկան կմ1+984-կմ6+000	4.02	
8	Փոքր Այրում-Ճոճկան կմ6+000-կմ 9+820	3.82	
9	Ս3-Կուրթան կմ0+000-կմ4+500	4.50	
10	Ս3-Կուրթան կմ4+500-կմ8+130	3.63	
Ընդամենը՝ Լոռու մարզ		18.41	
11	Ս1-Գառնառիճ կմ0+000-կմ10+123	10.12	Շիրակ
12	Հոռմ-Գեղամիստ կմ0+000-կմ3+700	3.70	
13	Հոռմ-Գեղամիստ կմ3+700-կմ8+000	4.30	
14	Հոռմ-Գեղամիստ կմ 9+400-կմ 12+286	2.89	
15	Ս1-Լեռնակերտ կմ 4+600-կմ 8+550	3.95	
16	Գյումրի-Արեգնադեմ կմ 0+000-կմ4+700	4.70	
17	Գյումրի-Արեգնադեմ կմ4+700-կմ9+400	5.00	
18	Գյումրի-Արեգնադեմ կմ9+400-կմ14+200	4.50	
19	Գյումրի-Այգաբաց կմ0+000-կմ4+800	4.80	
20	Գյումրի-Այգաբաց կմ4+800-կմ10+430	5.63	
21	Ս7-Ոսկեհասկ կմ0+000-կմ2+080	2.08	
Ընդամենը՝ Շիրակի մարզ		51.67	
22	Բռնակոտ-Սիսիան կմ0+000-կմ2+960	2.96	Սյունիք
23	Բռնակոտ-Սիսիան կմ2+960-կմ4+749	1.79	
24	Ս17-Մեղրի կմ0+000-կմ 3+000	3.00	
25	Ս-2-Կարճևան կմ0+000-կմ4+330	4.33	
26	Ս2-Ագարակ,Ագարակի շրջ.,Ս2-Թղկուտ	3.57	
27	Ս17-Ալվանք կմ0+000-կմ2+597	2.60	
28	Ս2-Վարդանիձոր,Շվանիձոր-Ս2	3.29	
29	Կավճուտ-Գողավանք կմ0+000-կմ2+500	2.50	
30	Կավճուտ-Գողավանք կմ2+500-կմ6+000	3.50	
31	Ս12-Հարթաշեն կմ0+000-կմ5+090	5.09	
Ընդամենը՝ Սյունիքի մարզ		32.62	
32	Ս11-Կարճաղբյուր կմ0+000-կմ1+870	1.87	Գեղարք.
33	Վարդենիս-Ակունք կմ0+000-կմ2+120	2.12	
34	Ս10-Չորագյուղ կմ0+000-կմ4+972	4.97	

Ընդամենը՝ Գեղարքունիքի մարզ		8.96	
35	Մ3-Վարդենուտ կմ0+000-կմ3+470	3.47	Արագած.
Ընդամենը՝ Արագածոտնի մարզ		3.47	
36	Այգեշոտ-Ջանֆիղա կմ0+000-կմ4+200	4.20	Արմավիր
37	Արմավիր-Իսահակյան-Գյումրի կմ18+850-կմ22+800	3.95	
38	Արմավիր-Իսահակյան-Գյումրի կմ22+800-կմ25+956	3.16	
Ընդամենը՝ Արմավիրի մարզ		11.31	
39	Բերդ-Ներք.Կարմիրաղբյուր կմ0+000-կմ2+580	2.58	Տավուշ
40	Բերդ-Ներք.Կարմիրաղբյուր կմ2+580-կմ7+200	4.62	
Ընդամենը՝ Տավուշի մարզ		7.20	
41	Երևան-Գեղարդ կմ10+770-կմ13+850	3.13	Կոտայք
Ընդամենը՝ Կոտայքի մարզ		3.13	
ԱՄԲՈՂՁԸ		154.15	